DOI: https://doi.org/10.54338/18294200-2024.1-05 *ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ*

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱՒՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ՄՈԼԴՈՎԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Աննա Արայիկի Խաչատրյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

anna.khachatryan888@gmail.com

Ուսումնասիրությունը նպատակ ունի ներկայացնել հանրային տարածքի ձևավորման մասնակցային ճարտարապետության մոտեցման փորձը, որը նախատեսում է տարբեր սոցիալական խմբերի և շահագրգիռ կողմերի անմիջական ներգրավվածությունը տարածքի պլանավորման գործընթացին: Այն իր մեջ միավորում է ֆունկցիան, միջավայրի տարրերը, սոցիալական միավորները, բիզնեսը և այլ գործառույթներ, հանդիսանալով սոցիալական կապերի ներկայացման մասնագիտական հարթակ, որտեղ շահառուները ձևավորում են ֆիզիկական միջավայրը և օգնում գնահատել առաջարկվող նախագծային լուծումները: Մասնակցային ճարտարապետության մոտեցման հայեցակարգը պատկերավոր ցուցադրելու համար ներկայացվում է Նոր Նորքի Մոլդովական 29/1-29/6 հանրակացարանների հանրային տարածքի վերաիմաստավորման տարածական պլանավորումը և լանդշաֆտային ձևավորումը, որի շահառուները տարբեր սոցիալական և էթնիկ խմբերի ներկայացուցիչներ են: Ներկայացվում է նախագծի շրջանակում մշակված մասնակցային ճարտարապետությունը և տեղին համապատասխանեցման փորձը: Նախագծի հետազոտական մասն իրականացվել է սոցիոլոգի և ճարտարապետի կողմից, ովքեր համատեղ գործունեության ընթացքում իրականացրել են բազմաշերտ հետազատություն: Փորձ է կատարվել բացահայտել և վերլուծել տեղաբնակների մասնակցայնությունը, հարցումների, տեղային դիտարկումների արդյունքների և փաստարկների վրա հիմնվելով, տալ լուծումներ տեղի խնդրիներին՝ արդյունավետ կիրառելով կայուն զարգացման սկզբունքները:

Բանալի բառեր. *մասնակցային ճարտարապետություն, հանրային տարածք, վերաիմաստավորում, կայուն զարգացում, տարածական պլանավորում*

Ներածություն

Նոր Նորքի Մոլդովական 29/1-29/6 հանրակացարաններին հարակից հանրային տարածության վերաիմաստավորման տարածական պլանավորման և լանդշաֆտային կազմակերպման նախագիծը ձևավորվել է մասնակցային ճարտարապետության սկզբունքներին և տեղի բնակիչների պահանջներին բավարարող միջավայր ստեղծելու գաղափարի շուրջ [1]: Հաշվի առնելով օգտագործվող մեթոդաբանության սկզբունքները և տեղի առանձնահատկությունները՝ ընթացիկ աշխատանքներում ընդգրկվել են նաև ՄԱԿ-ի գրասենյակի, Հայաստանում Կարմիր խաչի և Հայաստանի միգրացիոն ծառայության մասնագետներ:

Նյութեր և մեթոդներ

Տարածքի պլանավորման և լանդշաֆտային ձևավորման մշակման համար իրականացվել են ճարտարապետական և սոցիոլոգիական խառը մեթոդներով հետազոտություններ՝ դիտարկումներ, փաստաթղթերի վերլուծություն, չափագրություն, լուսանկարահանում, բնակիչների շրջանում կատարվել են հարցումներ, «մասնակցային» շարադրություն (նկ. 1) և մտային քարտեզագրում (նկ. 2), որոնց շնորհիվ բացահայտվել են տեղին բնորոշ մի քանի թաքնված, բայց նշանակալի օրինաչափություններ, փոխհարաբերություններ, ինչպես նաև գործընթացներ և վարքի սցենարներ, որոնք համատեղ հիմք են հանդիսացել նախագծային լուծումների ընտրության հարցում: Հավաքագրված տվյալների վերլուծությունը մատնանշում է այն փաստը, որ տեղաբնակների վերաբերմունքը հարակից կառուցապատման և բնակեցման միջավայրի նկատմամբ կոնֆլիկտային է [2]:



Նկ. 1. «Մասնակցային» շարադրության օրինակ



Նկ. 2. Մտային քարտեզագրման օրինակ

Դիտարկենք հիմնական կոնֆլիկտային կետերը.

• Տեղաբնակները միանշանակ վերաբերմունք ունեն բնակելի տարածքին անմիջապես հարող և ժամանակի ընթացքում հանրային տարածքը գրաված գերեզմանոցի նկատմամբ: Երեխաները, կազմակերպելով իրենց ժամանցը, այն օգտագործում են որպես խաղահրապարակ, սակայն մեծահասակների մոտ վերջինս մտահոգության և տհաճ զգացումների առաջացման պատճառ է հանդիսանում: Անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել այն փաստերին, որ սանիտարական գոտու բացակայությունը, նոր թաղումների իրականացման՝ անմիջապես բնակելի տարածքին հարելը և այլն հակասում են ՀՀ Օրենսդրության դրույթներին (նկ. 3) [3]:

• Հանրային տարածքների կորուստ: Բացի վերոնշյալ խնդրից բնակիչներն ապրում են կորստի ցավով՝ մատնանշելով նաև այն փաստը, որ իրենց խաղահրապարակը սեփականաշնորհվել է, պարսպապատվել և կառուցվել է սպորտային կենտրոն, որից իրենք չեն կարողանում



Նկ. 3. Տարածքի հարակից կառուցապատման ֆունկցիոնալ նշանակությունը

օգտվել: Հանրային տարածքները զավթվել են, իսկ իրենք հարմարավետ և կահավորված հանգստի տարածք չունեն (նկ. 4):

- Տարածքում գիշերային լուսավորության անբավարարությունը բնակիչների կողմից ընկալվում է որպես անապահովության և տարանջատվածության նշան: Նմանօրինակ խնդրի առաջ են կանգնել նաև եվրոպական շատ երկրներ՝ էներգիա խնայելու համար կրճատելով գիշերային լուսավորության ժամերը: Հետագա ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն վատ ազդեցություն է թողել հանրային առողջության և բարեկեցության վրա, խթանել է հասարակության մտահոգությունների, հանցագործությունների ավելացումը, ինչը նաև փաստագրվել է ուսումնասիրվող տարածքում [4]:



Նկ. 4. Տարածքի ձևափոխության ժամանակագրությունը՝ ըստ օդալուսանկարների

- Ներկայիս կանաչապատման վիճակը չի բավարարում ժամանակակից նորմատիվային պահանջներին: Տնկարկներն աղքատ են կազմով և կառուցվածքով, մեծամասամբ չեն կատարում իրենց սանիտարական, էկոլոգիական և էսթետիկական գործառույթները: Վիճակն էլ ավելի վատթարացնում է տարածքին հարող մայրուղու առկայությունը և սանիտարական գոտու բացակայությունը, մինչդեռ բնակելի միկրոշրջանը նախագծելիս նախատեսվել և իրականացվել էին բազմազան տնկարկների տնկման աշխատանքներ, որոնք գեղագիտական նշանակությունից առավել, լուծել են ամբողջ քաղաքի էկոլոգիական և կլիմայական խնդիրները, հանդիսացել պատնեշ քամիների դեմ և նպաստել բնակչության բարեկեցությանը [5]:



Նկ. 5. Բնակչության կազմը

Դիտարկվող տարածքում բնակչության սոցիալական (անապահով ընտանիքներ, զինվորականներ և այլն) և էթնիկ (այստեղ են բնակվում Ադրբեջանից տեղահանված հայազգի փախստականները, Հայաստանում ժամանակավոր ապաստարան հայցողները Եմենից, Իրանից, Սիրիայից, Կոնգոյից և այլ վայրերից) խմբերի (նկ. 5) բազմազանությունը [6] ենթադրում է տարածքի օգտագործման տարբեր սցենարներ:

Արդյունքներ և քննարկում

Օգտագործելով դիտարկումների արդյունքները, այցելությունների օրինաչափությունները, ժողովրդագրական բնութագրերը և սոցիալական հարցումների օրինաչափությունների և համապարփակ տվյալների բազան՝ նախագծով փորձ է կատարվել ստեղծել ներդաշնակ միջավայր բազմազգ բնակիչների և տեղի միջև, որով հնարավոր կլինի նպաստել բնակչության բոլոր շերտերի ինտեգրմանը:

Փորձ է կատարվել վերաիմաստավորելու վերջին տարիների ընթացքում ձևավորված անմխիթար պայմանները (նկ. 6, 7), բուժելու բնակիչների լքված և սոցիալական տարանջատվածության սպիները, ձևավորելու նոր սովորույթների և փոխհարաբերությունների խթան հանդիսացող տարբեր տարածություններ բնակիչների, սոցիալական բոլոր խմբերի հանգստի, ընկերների հետ հանդիպումների և զրույցների կազմակերպման, ինքնարտահայտման հնարավորություններով, որոնք իրենց հերթին կնպաստեն ինտեգրմանը: Նախագիծը ձևավորվել է հասանելիության և հավասարության գաղափարի շուրջ, ինչով կարևորվել է սահմանափակ հնարավորություններ ունեցող բնակիչների մատչելիության ապահովումը: Այսպիսով ձևավորվել է տարածություն, որտեղ յուրաքանչյուր բնակիչ կկարողանա մուտք գործել և օգտվել տարածքից [7]:

Նկ. 6. Տարածքի ներկայիս իրադրությունը, մուտքը

Նկ. 7. Տարածքի ներկայիս իրադրությունը, ազատ տարածություն

Պլանավորումը (նկ. 8-12) ներառում է ջրային խաղահրապարակի նախագծում՝ հասարակական կանաչ տարածքներով, որի կառուցվածքը սահուն անցումներով հրապարակների համակարգ է, իրար միաձուլվող կանաչ տարածքներով և կենտրոնական հոսքուղով: Կենտրոնական խաղահրապարակը շրջապատված է կանաչապատ բլրակներով՝ փոքրիկ այցելուների և նրանց հետևող մեծահասակների հարմարավետ ժամանցը կազմակերպելու համար բարենպաստ միջավայր ստեղծելով և սահմանափակելով հարակից ուղիներից տեսանելիությունը: Նախատեսվել են մակերևութային հոսող ջրային մակերեսներ՝ «գետակ»՝ հաշվի առնելով տեղաբնակների նախասիրությունները, ինչպես նաև հանրային տարածքներում ջրի առկայության դրական ազդեցությունը բնակիչների կյանքի որակի, առողջության, մտավոր և հոգեկան հանգստության վրա [8]: Վերջինիս երկայնքով նախատեսվում են ոլորաձև նստարաններ, որոնք ստեղծում են հարմարավետ, ներդաշնակ և տարանջատված միջավայր կանաչ զողտրիկ անկյուններով:



Նկ. 8. Գլխավոր հատակագիծ

Կոնֆլիկտային կետերը հարթելու, այգու օգտագործումը նորմատիվաիրավական չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով նախագծում հատուկ ուշադրություն է դարձված կանաչապատմանը, պահպանվում են տարածքում գոյություն ունեցող ծառերը և համալրվում բնապահպանական ու գեղագիտական նշանակություն ունեցող տարբեր սաղարթայնության և բարձրության ծառերով, թփերով, ինչով էլ կապահովվի բնական համալիրի էկոլոգիական հավասարակշռությունը և կնպաստի քաղաքացիների բնության հետ կապին: Բնակիչներն են կազմակերպելու միամյա և բազմամյա ծաղիկների տնկում, որոնք միասին ամբողջականացնելու են տարածքը և խնամքը, ինչը ամրապնդելու է նրանց և տարածքի միջև կապը [9]:

Նկ. 9. Դիտակետ 1, մուտքային հանգույցի կազմակերպում



Նկ. 10. Դիտակետ 2, խաղահրապարակի կազմակերպում

Տարածքի ռելիեֆայնության հնարավորություններն օգտագործելով՝ ստեղծվում է ամֆիթատրոնային գոտի՝ հավաքույթների, միջոցառումների, տոնակատարությունների անցկացման հարմարություններով, որը հնարավորություն կընձեռի տարբեր մշակույթ ուեցող բնակիչներին երեկույթներ կազմակերպել և ծանոթացնել իրենց ազգային մշակույթի հետ: Հաշվի առնելով բնակիչների ցանկությունը, ինչպես նաև բնակելի ֆոնդի անհարմարավետությունները՝ բակային հատվածում նախատեսվում է ընթերցանության անկյուն, որտեղ հնարավոր է նաև դասերին պատրաստվել և քննարկումներ անցկացնել: Փոքր ճարտարապետական ձևերի ստեղծումը, տեղադրումը և տարածքի կանաչապատման աշխատանքների իրականացումը նախատեսում է տեղաբնակների ակտիվ մասնակցությունը, քանզի գոյություն ուեցող փորձն արդեն իսկ ցույց է տալիս, որ մասնակցային ճարտարապետության այս բաղադրիչը նպաստում է բնակչի և իր փոխազդման միջավայրի կապի ամրապնդմանը [10]:

Տրված առաջարկների արդյունավետությունը գնահատելու համար բացի բնակիչների հետ ընթացիկ քննարկումներից, իրականացվել է պանելային քննարկում և պրեզենտացիա՝ ներգրավելով շահագրգիռ բոլոր կողմերին, ինչը հնարավորություն է տվել նախագծի վերջնական փուլում նվազագույնի հասցնել հնարավոր բացասական ազդեցությունները:

Նկ. 11. Դիտակետ 3, խաղահրապարակի կազմակերպում

Նկ. 12. Դիտակետ 4, բացօթյա գրադարանի և ուսումնական հարթակի կազմակերպում

Եզրակացություն

Այսպիսով, հանրային տարածքները բազմաթիվ էկոհամակարգային ծառայություններ են մատուցում բնակիչներին և համարվում են սոցիալ-էկոլոգիական արդարության կարևոր տարր, և մասնակցային ճարտարապետության մեթոդաբանությամբ ձևավորվելով, առանձնանում են իրենց շարունակական զարգացմամբ, բարեկեցությամբ և շրջանաձև տնտեսության մեջ: Մասնակցային ճարտարապետության մեթոդաբանությամբ ձևավորված տարածքը, կոլեկտիվ կերպով վերաիմաստավորելով և վերազինվելով, ամրապնդում է կապը մարդկանց և նրանց փոխազդման վայրերի միջև:

Դիտարկվող օրինակով ստեղծվել է ինտեգրված սոցիալ-էկոլոգիական համակարգ, որտեղ հանրային տարածքի պլանավորումն ու ձևավորումը կենտրոնացած է էկոհամակարգային ծառայությունների մատուցման, սոցիալական ցանցերի ստեղծման և սոցիալական փոխազդեցության հնարավորություն վրա, որը բարձրացրել է սոցիալ-էկոլոգիական արդարությունը՝ կարևորելով առողջության և բարեկեցության բաղադրիչը:

Գրականության ցանկ

[1] **J. Sanchez,** Participatory Systems in the Age of Platforms, Routledge, UK, 2020.

[2] **V. Mitchell, T. Ross, R. Sims, Ch.J. Parker,** Empirical investigation of the impact of using co-design methods when generating proposals for sustainable travel solutions. CoDesign 12 (4) (2015) 205–220.

[3] «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի փետրվարի 27-ի ՀՕ-40-Ն օրենք:

[4] **P.M.Asaro,** Transforming society by transforming technology: the science and politics of participatory design. Accounting Management and Information Technology 10 (2000) 257–290.

[5] **Ch. Perkins, R. Steinbach, L. Tompson, J. Green, Sh. Johnson, Ch. Grundy, P. Wilkinson, and Ph. Edwards,** What is the effect of reduced street lighting on crime and road traffic injuries at night? A mixed-methods study. Public Health Research 3.11 (2015) Chapter 3.

[6] Հայաստանի ազգային արխիվ. Ֆ.461, գ.1y39:

[7] ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության զեկույցներ. <https://migration.am/reports>:

[8] **S. Wheeler,** Planning for Sustainability: creating livable, equitable, and ecological communities, 2-rd Ed., Routledge, New York, NY, 2014.

[9] **K. Langie, K. Rybak-Niedziółka, V. Hubačíková,** Principles of Designing Water Elements in Urban Public Spaces, Sustainability 14(11) (2022) 6877 1-12.

[10] **F. Enssle, N. Kabisch,** Urban green spaces for the social interaction, health and well-being of older people — An integrated view of urban ecosystem services and socio-environmental justice, Environmental Science & Policy 109 (July 2020) 36-44.

СОУЧАСТВУЮЩЕЕ ПРОЕКТИРОВАНИЕ: НОВЫЙ ПОДХОД К РЕКОНСТРУКЦИИ ОБЩЕСТВЕННОЙ ТЕРРИТОРИИ НА ПРИМЕРЕ УЛИЦЫ МОЛДОВАКАН Г. ЕРЕВАНА

Анна Араиковна Хачатрян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

anna.khachatryan888@gmail.com

Целью исследования является внедрение подхода соучаствующего проектирования в развитие общественных пространств путем вовлечения различных социальных групп и заинтересованных сторон в процесс планирования пространства. Оно объединяет в себе разные функции, элементы окружающей среды, социальные единицы, бизнес и т.д. Соучаствующее проектирование является профессиональной платформой для представления социальных связей, где бенефициары создают физическую среду и помогают оценить предлагаемые проектные решения. Чтобы проиллюстрировать концепцию соучаствующего архитектурного подхода, представлено пространственное планирование и ландшафтный дизайн общественного пространства общежитий района Нор Норк, ул. Молдовакан 29/1-29/6. Бенефициарами исследуемого публичного пространства являются представители разных социальных и этнических групп. Представлено соучаствующее проектирование, примененное в рамках проекта, и соответствующий опыт адаптации. Исследовательская часть проекта была проведена социологом и архитектором, которые в ходе совместной работы провели многоуровневое исследование. Были предприняты попытки идентифицировать и проанализировать участие местных жителей, результаты опросов, местные наблюдения и предложить решения местных проблем на основе аргументов, эффективно применяя принципы устойчивого развития.

Ключевые слова: *соучаствующее проектирование, общественное пространство, переосмысление, устойчивое развитие, пространственное планирование*

PARTICIPATORY ARCHITECTURE: A NEW APPROACH TO PUBLIC TERRITORIAL RECONSTRUCTION BY THE EXAMPLE OF MOLDOVAKAN STREET OF YEREVAN CITY

Anna Khachatryan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

anna.khachatryan888@gmail.com

The aim of the following study is to introduce the participatory architecture in the development of the public spaces, by involving different social groups and stakeholders in the process of planning. It combines function, environmental elements, social units and business by presenting a professional social platform, where the beneficiaries create the environment and help to evaluate the proposed design solutions. In order to illustrate the concept of participatory architecture approach, the spatial planning of the public space of the dormitories located in Nor Nork Moldovakan 29/1-29/9 is presented. This is a repurposed project designed in collaboration with people of different social and ethnic groups. The practice of appropriate adaptation to the participatory architecture within the design process is presented. The research part of the project was carried out by a sociologist and an architect, who carried out a multi-layered research during their joint work. With surveys and local observations, attempts have been made to identify and analyse on how the participants can provide solutions to local problems, and how to effectively apply the principles of sustainable development to those designs.

Keywords*: participatory architecture, public space, reinterpretation, sustainable development, spatial planning*

Խաչատրյան Անանա Արայիկի *(ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Ճարտարապետության տեսության, պատմության և ժառանգության ամբիոն, ասպիրանտ, (+374)93000176, anna.khachatryan888@gmail.com*

Хачатрян Анна Араиковна *(РА, г. Ереван) - НУАСА, кафедра Теории архитектуры, истории и наследия, аспирант, (+374)93000176, anna.khachatryan888@gmail.com*

Khachatryan Anna *(RA, Yerevan) - NUACA, Chair of Architecture Theory, history and heritage, postgraduate student, (+374)93000176, anna.khachatryan888@gmail.com*

Ներկայացվել է՝ 20.12.2024թ.
Գրախոսվել է՝ 19.06.2024թ.
Ընդունվել է տպագրության՝ 30.04.2024թ.